Հավելված
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի նախագահի
12.08.2014թ. թիվ 294-Լ որոշման

Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Կ Ա Ր Գ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ք. Երևան, 2014թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը **(այսուհետ՝ Փաստաբանների պալատ),**

հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով **(այսուհետ՝ Օրենք)** Փաստաբանների պալատի խնդիրներից է հանդիսանում իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում պաշտպանելը, և փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը,

նկատի ունենալով նաև, որ Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի կարևորագույն ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը,

հաշվի առնելով այն, որ փաստաբանների իրավունքների պաշտպանության հարցում Փաստաբանների պալատի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է միասնական, նպատակաուղղված և համակարգված քաղաքականություն իրականացնող կառույցի առկայություն,

անհրաժեշտ է համարում ստեղծել Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով և այդ հանձնաժողովին վերապահել ստորև ամրագրված լիազորությունները:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Փաստաբանների պալատի՝ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի **(այսուհետ՝ Հանձնաժողով)** ձևավորման և գործունեության սույն կարգով **(այսուհետ՝ Կարգ)** սահմանվում է Հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը:

1.2. Կարգով փաստաբանների իրավունքների պաշտպանությանը վերաբերող դրույթները և երաշխիքները կիրառելի են ոչ միայն Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, այլ նաև Փաստաբանների պալատում հավատարմագրվելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնող այլ պետության փաստաբանների, փաստաբանների օգնականների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի **(այսուհետ՝ Փաստաբանական դպրոց)** ունկնդիրների նկատմամբ:

1.3. Հանձնաժողովի նպատակն է միջոցներ ձեռնարկել փաստաբանների

իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

1.4. Իր նպատակի իրականացման համար Հանձնաժողովի առջև դրված են հետևյալ խնդիրները.

1) հավաքագրել և վերլուծել փաստաբանների մասնագիտական իրավունքների և Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված երաշխիքների խախտման վերաբերյալ տեղեկատվությունը.

2) քննության առնել փաստաբանների մասնագիտական իրավունքների և Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված երաշխիքների խախտման վերաբերյալ փաստաբանների դիմումները կամ լրատվամիջոցների հաղորդումները.

3) հրատապ արձագանքել փաստաբանների իրավունքները խախտող միջադեպերին և ձեռնարկել համապատասխան միջոցներ այդ խախտումների վերացման ուղղությամբ.

4) Փաստաբանների պալատի խորհրդին և նախագահին ներկայացնել համապատասխան առաջարկներ (ընդհուպ՝ օրենքի նախագիծ) փաստաբանների իրավունքների խախտումների վերացման և կանխարգելման համար անհրաժեշտ միջացառումներ ձեռնարկելու համար.

5) վերլուծել արձանագրված խախտումները և վարել համապատասխան վիճակագրություն:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հանձնաժողովը ստեղծվում է Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ՝ երկու տարի ժամկետով:

2.2. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից, որից մեկը Փաստաբանների պալատի նախագահի կողմից նշանակվում է որպես Հանձնաժողովի համակարգող:

2.3. Հանձնաժողովի անդամ կարող են լինել փաստաբանները:

2.4. Հանձնաժողովը Փաստաբանների պալատի մարմին չի հանդիսանում:

2.5. Հանձնաժողովը գործում է օրինականության, հավասարության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

2.6. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է Փաստաբանների պալատի խորհրդից, նախագահից և այլ մարմիններից:

2.7. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց տարեկան երկու անգամից ոչ պակաս:

2.8. Հանձնաժողովի նիստերը հրավիրում է Հանձնաժողովի համակարգողը՝ իր կողմից հաստատված օրակարգով: Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին ստանում են ծանուցում՝ էլեկտրոնային փոստով, ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 1 (մեկ) օր առաջ:

2.9. Հանձնաժողովի նիստ կարող է հրավիրվել նաև Փաստաբանների պալատի խորհրդի կամ նախագահի առաջարկով՝ հրատապ քննարկում և լուծում

պահանջող և Հանձնաժողովի իրավասության մեջ ընդգրկված հարցերի կապակցությամբ:

2.10. Հանձնաժողովի նիստին Հանձնաժողովի անդամի մասնակցությունը պարտադիր է:

2.11. Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի նիստում համապատասխան հարցի (հարցերի) քննարկմանը մասնակցելու համար Հանձնաժողովի համակարգողը կարող է հրավիրել Փաստաբանների պալատի խորհրդի անդամներին, նախագահին, փաստաբաններին, և այլ մասնագետների:

2.12. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի համակարգողը և Հանձնաժողովի առնվազն երկու անդամ:

2.13. Հանձնաժողովն իր նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ կարող է ընդունել ուղերձներ, հայտարարություններ, ինչպես նաև խորհրդատվական որոշումներ:

2.14. Հանձնաժողովի ուղերձները, հայտարարությունները և խորհրդատվական որոշումներն ընդունվում են բաց քվեարկության միջոցով՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի համակարգողի ձայնը որոշիչ է: Հանձնաժողովի ուղերձները, հայտարարությունները և խորհրդատվական որոշումներն ստորագրում են Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները:

2.15. Հանձնաժողովի համակարգողի հանձնարարությամբ Հանձնաժողովի անդամներից մեկն անհրաժեշտության դեպքում արձանագրում է Հանձնաժողովի նիստերը:

2.16. Հանձնաժողովին նյութատեխնիկական աջակցություն է ցուցաբերում Փաստաբանների պալատի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի:

2.17. Հանձնաժողովը՝

1) փաստաբաններից ստանում է տեղեկություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից փաստաբանների, ինչպես նաև վերջիններիս վստահորդների իրավունքների խախտումների մասին.

2) իրականացնում է սույն Կարգի նպատակից և խնդիրներից բխող և անհրաժեշտ այլ լիազորություններ:

2.18. Հանձնաժողովն իրավասու է նաև.

1) կազմակերպել հասարակական կարծիքի ուսումնասիրություն, այդ թվում՝ փաստաբանների և դատաիրավական համակարգի ներկայացուցիչների շրջանակում.

2) քննարկումների, դասախոսությունների, սեմինարների և այլ միջոցառումների օգնությամբ փաստաբաններին, ինչպես նաև Փաստաբանական դպրոցի ունկնդիրներին ցույց տալ իրավական և տեղեկատվական բնույթի աջակցություն.

3) արձագանքել փաստաբանների և վերջիններիս վստահորդների իրավունքների և շահերի հետ կապված խնդիրներին և աջակցել դրանց լուծմանը ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներով.

4) սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնել փաստաբանությանն առնչվող իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ:

2.19. Հանձնաժողովն իր գործունեության վերաբերյալ կիսամյակային հաշվետվություն է ներկայացնում Փաստաբանների պալատի նախագահին, որում պետք է արտացոլվեն հաշվետու ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների խախտման վերաբերյալ արձանագրված դեպքերը և դրանց վերացման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումները:

2.20. Իր խնդիրների իրականացման և արձանագրված դեպքերի լուսաբանման նպատակով Հանձնաժողովը կարող է օգտվել հանրային իրազեկման բոլոր իրավաչափ միջոցներից:

2.21. Հանձնաժողովի համակարգողը՝

1) նախապատրաստում և վարում է Հանձնաժողովի նիստերը.

2) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը.

3) ստորագրում է Հանձնաժողովի ակտերը.

4) Հանձնաժողովի անդամներին և Փաստաբանների պալատի նախագահին իրազեկում է Հանձնաժողովի որոշումների կատարման ընթացքի մասին.

5) ընթացք է տալիս և պատասխանում Հանձնաժողովին ուղղված դիմումներին, բողոքներին և առաջարկություններին.

6) Փաստաբանների պալատի խորհրդի կամ նախագահի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ:

2.22. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել Հանձնաժողովի իրավասությանը վերապահված հարցեր.

2) նախապես ծանոթանալ Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.

3) Հանձնաժողովի նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնել իր դիրքորոշումը, ելույթներ ունենալ, տալ հարցեր և անել առաջարկություններ.

4) ծանոթանալ Հանձնաժողովին հասցեագրված ցանկացած փաստաթղթի:

2.23. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել Հանձնաժողովի նիստերին.

2) կատարել Հանձնաժողովի համակարգողի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները.

3) չդրսևորել այնպիսի վարքագիծ, որը չի համընկնում Հանձնաժողովի նպատակի և խնդիրների հետ:

2.24. Հանձնաժողովի համակարգողի միջնորդության հիման վրա Փաստաբանների պալատի նախագահը կարող է վաղաժամկետ դադարեցնել Հանձնաժողովի անդամի լիազորությունները, եթե՝ նա առանց հարգելի պատճառների առնվազն երեք անգամ չի ներկայացել Հանձնաժողովի նիստերին:

2.25. Հանձնաժողովի համակարգողի կամ Հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են վերջիններիս դիմումների հիման վրա, ինչպես նաև այն դեպքում, երբ կասեցվել կամ դադարեցվել է նրանց փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը: Տվյալ դեպքում փաստաբանական գործունեության արտոնագրի կասեցման կամ դադարեցման մասին Փաստաբանների պալատի խորհրդի կողմից որոշում ընդունելուց հետո հինգ օրվա ընթացքում Փաստաբանների պալատի նախագահը կայացնում է որոշում՝ Հանձնաժողովի նոր անդամ նշանակելու մասին: Հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է նախկին անդամի լիազորությունների մնացած ժամկետով:

2.26. Հանձնաժողովի համակարգողի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ՝ Հանձնաժողովի առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա, եթե Հանձնաժողովի համակարգողը իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է Կարգի պահանջների խախտմամբ: Հանձնաժողովի համակարգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Փաստաբանների պալատի նախագահը նշանակում է Հանձնաժողովի նոր համակարգող՝ նախկին համակարգողի լիազորությունների մնացած ժամկետով:

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Հանձնաժողովի առաջին կազմին Փաստաբանների պալատի նախագահը ձևավորում է սույն կարգն ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսվա ընթացքում:

3.2. Մինչև Հանձնաժողովի ամբողջ կազմի ձևավորումը Հանձնաժողովի համակարգողն իրավասու է գործել Հանձնաժողովի անունից՝ բոլոր լիազորություններով:

3.3. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2014 թվականի օգոստոսի 12-ից և գործում է անժամկետ: